ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-067-22.03.2019-ՊԻ-011/0, Կ-0671-22.03.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի փոփոխության, լրացման) հեղինակը	**Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	**ԱԺ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան**	1. **«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ**	1) Նախագծի վերնագրում «ՀՀ օրենքը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը» բառերով («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		սահմանադրական օրենքի նախագիծ	տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով),		
2		**«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 1**	2) 1-ին հոդվածից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում: Սահմանադրական օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են սահմանադրական օրենքի վերնագիրը, սահմանադրական օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «սահմանադրական օրենք» բառը:),	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 1	3) 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2-րդ մասով (նախորդ մասը համարակալելով). «2) 4-րդ մասում «հնգօրյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով» (հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանվող ժամկետները),	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
3		**«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրակ**	4) 2-րդ հոդվածում «2019 թվականի ապրիլի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով (Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		ան օրենքի նախագիծ, հոդված 2	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես: Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահն ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով):		
4		**«Սահմանադրա**	1) վերնագրում «ՀՀ օրենքը»	**Ընդունվել է.**	**Ընդունվել է**

		կան դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ	բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը» բառերով (վերը նշված հիմնավորմամբ),	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
5		**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ**	2) 1-ին հոդվածից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել (վերը նշված հիմնավորմամբ),	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 1			
6		**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 3**	3) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 3.** Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելու դեպքերում՝ նրա լիազորությունները դադարելու օրվան նախորդող յոթերորդ ամսվա վերջին օրը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-7-րդ կետերով սահմանված հիմքերով, Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով Սահմանադրական	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվելուց ոչ ուշ, քան մեկ օր հետո Սահմանադրական դատարանի նախագահն այդ մասին տեղեկացնում է համապատասխանաբար Հանրապետության նախագահին, Վճռաբեկ դատարանի նախագահին և Կառավարությանը» Այդպիսով, առաջարկվում է՝ ա. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելու դեպքերում տեղեկացնելու ընթացակարգը հստակորեն տարանջատել նշված մասի 3-7-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները		

			դադարելու դեպքերից, բ. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելու դեպքերը հստակորեն տարանջատել դադարեցվելու դեպքերից. գ. պահպանել Սահմանադրության 213-րդ հոդվածով սահմանված՝ Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումների հաջորդականությունը (ինչպես սահմանված է նախագծի 4-րդ հոդվածով),		
7		**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և**	4) 4-րդ հոդվածի 1-ին մասով շարադրվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «դադարելուց կամ դադարեցվելուց հետո» բառերը փոխարինել «դադարելու կամ դադարեցվելու դեպքում» բառերով,	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 4	քանի որ նախագծով առաջարկվող կարգավորման համաձայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման դեպքերում՝ թափուր տեղում նոր դատավորի ընտրությունն անցկացվում է Սահմանադրական դատարանի նախագահի կողմից տեղեկացվելու օրվան հաջորդող վեցամսյա ժամկետում, այսինքն՝ նախապես, այլ ոչ թէ՝ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց հետո:		
8		**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրակ**	5) 4-րդ հոդվածի 1-ին մասով շարադրվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «նրա	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		ան օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 4	լիազորությունների դադարման դեպքերում՝» բառերը փոխարինել «Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման դեպքերում՝ նրա» բառերով՝ առավել որոշակիացնելով հղումները,		
9		**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ,**	6) 4-րդ հոդվածի 1-ին մասով շարադրվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ, «2. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-7-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման, ինչպես նաև սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		հոդված 4	Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման կամ Սահմանադրական դատարանի նոր դատավոր չընտրվելու դեպքերում՝ Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածուների առաջադրումներ կատարելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո մեկամսյա ժամկետում:»: Այդպիսով, առաջարկվում է՝ ա. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելու դեպքերը հստակորեն տարանջատել դադարեցվելու դեպքերից. բ. լրացնել այն դեպքը, երբ Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի նոր դատավոր չի ընտրվում:		
10		**«Սահմանադրական**	7) 4-րդ հոդվածի 1-ին մասով լրացվող՝ Սահմանադրական	**Ընդունվել է.** Կատարվել է	**Ընդունվել է**

		դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 4	դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում «իրավասու մարմինը» բառերից հետո «կրկին» բառը հանել, «դատավորի» բառից հետո լրացնել «նոր» բառով, քանի որ նույն կարգավորումն առկա է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 10-րդ մասում (Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ չընտրվելու դեպքում), 139-րդ հոդվածի 12-րդ մասում (Հանրապետության նախագահ չընտրվելու դեպքում), 141-րդ հոդվածի 4-րդ մասում (Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի (փաստաթղթերի) անհապատասխանության դեպքում), 142-րդ հոդվածի 7-րդ մասում (Վճռաբեկ դատարանի նախագահ չընտրվելու դեպքում), 143-րդ հոդվածի 7-րդ և 11-րդ մասերում (Վճռաբեկ դատարանի դատավոր չընտրվելու դեպքում), 144-	համապատասխան փոփոխություն:	

			որդ հոդվածի 9-րդ մասում (Բարձրագույն դատական խորհրդի անդամ չընտրվելու դեպքում), 145-րդ հոդվածի 12-րդ մասում (գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի և մյուս անդամների, Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի մյուս անդամների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների չընտրվելու դեպքերում),		
11		**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ**	8) 5-րդ հոդվածում «2019 թվականի ապրիլի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով (վերը նշված հիմնավորմամբ):	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

		կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 5			